ՀՏԴ 658.511:622

Ս.Ա. ՄԿՐՏՉՅԱՆ, Լ.Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ, Ս.Մ. ԲԱԽՇՅԱՆ, Կ.Ա. ՂՈՒԼՅԱՆ

ԼԵՌՆԱՄԵՏԱԼՈՒՐԳԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ-ում արտադրվող լեռնամետալուրգիական արտադրանքը հիմնականում իրացվում է արտերկրում՝ Լոնդոնյան բորսայական գներով, և ըստ էության, միջազգային շուկայական մրցակցության պայմաններում: Այս առումով կարևորվում են արտադրանքի արտադրության և իրացման վերլուծության հարցերը, որոնց գրագետ լուծումը կարող է ապահովել ոլորտի ընկերությունների համար երաշխավորված եկամուտներ: Վերլուծվում են «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի արտադրանքի արտադրության և իրացման գործընթացները վերջին տարիների կտրվածքով:

Առանցքային բառեր. արտադրանքի արտադրություն, իրացում, արտահանման շուկաներ, պայմանագրային պարտավորությունների կատարում:

Արտադրանքի արտադրության ծավալը և արտադրանքի իրացման ծավալը փոխադարձորեն կախված ցուցանիշներ են: Սահմանափակ արտադրական հնարավորությունների և անսահմանափակ պահանջարկի պայմաններում առաջին տեղ է մղվում արտադրանքի արտադրության ծավալը: Սակայն շուկայի հագեցմանը և մրցակցության ուժեղացմանը զուգընթաց ոչ թե արտադրությունն է որոշում վաճառքների ծավալը, այլ ընդհակառակը՝ վաճառքների հնարավոր ծավալն է հանդիսանում արտադրական ծրագրի մշակման հիմքը: Ձեռնարկությունը պետք է արտադրի միայն այն ապրանքները և այն ծավալով, որոնք նա իրականում կարող է իրացնել:

Հարկ է նշել, որ լեռնամետալուրգիական արտադրանքի արտադրության և իրացման ծավալները, այլ ընդհանուր գործոններից բացի, որոշվում են նաև առանձնահատուկ գործոններով, մասնավորապես՝ հանքաքարի հանույթի ծավալներով և այլն:

Լեռնամետալուրգիական արտադրանքի արտադրության ծավալի և իրացման աճի տեմպերը, նրա որակի բարձրացումը անմիջականորեն ազդում են ձեռնարկության ծախսերի, շահույթի և շահութաբերության մակարդակի վրա: Այդ պատճառով կարևորվում է այս ցուցանիշների վերլուծությունը:

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերության կողմից արդյունահանված հանքաքարի վերամշակումից արտադրվում է մոլիբդենի և պղնձի խտանյութ: Ընկերության հասույթի հիմնական մասը ձևավորվում է պղնձի խտանյութի և ֆերոմոլիբդենի իրացումից, որոնց մասնաբաժինն ընդհանուր հասույթում 2018թ.-ին կազմել է համապատասխանաբար 67% և

30% (2017թ.՝ 77.5% և 21.1%): 2019թ.-ին ընկերության կողմից իրացվել են համապատասխանաբար 129,136 չոր մետրիկ տ պղնձի խտանյութ, 8,851տ ֆերոմոլիբդեն և 383տ մոլիբդենի խտանյութ, 2018թ.-ին՝ 242,871տ և 6,980տ, 2017թ.՝ 260,646տ և 6,520տ (2020թ. ընկերությունը իրացրել է 238,817տ պղնձի խտանյութ, 12,498տ մոլիբդենի խտանյութ և 7,250տ ֆերոմոլիբդեն) [1]:

Արտադրված պղնձի խտանյութն արտահանվում է, իսկ մոլիբդենի խտանյութը վերամշակվում է «Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ-ի և «ԱՄՓ հոլդինգ» ՍՊԸ-ի կողմից: Մոլիբդենի խտանյութի վերամշակման արդյունքում ստացվում է ֆերոմոլիբդեն, որը հետագայում արտահանվում է ընկերության կողմից:



Նկ. 1. ՀՊՄԿ ՓԲԸ-ում արտադրված պղնձի խտանյութը 2014-2019թթ, տ/տարի

Պղնձի խտանյութը ընկերության բեռնատարների միջոցով Քաջարանից տեղափոխվում է Երևան և բեռնաթափվում է բեռնափոխադրող ընկերության տերմինալում: Այնուհետև կազմակերպվում է բեռի բեռնումը կամ կոնտեյներներ, կամ բաց բեռնավագոններ և գնացքով տեղափոխում Փոթի նավահանգիստ՝ հետագա տեղափոխման համար:

Ներկայում ընկերությունը ֆերոմոլիբդենը վաճառում է «Քրոնիմետ» ընկերությունների խմբի կազմի մեջ մտնող գործընկերներին: Մոլիբդեն արդյունահանվում է աշխարհի շուրջ 40 հանքավայրերում, որոնցից միայն 7-ը՝ «մաքուր» մոլիբդենային հանքեր, իսկ մյուսները՝ պղնձի կամ այլ օգտակար հանածոների հիմնական համակցությամբ հանքավայրեր են: Մոլիբդենի մոտավորապես 65-70%-ը արդյունահանվում է հանքավայրերում, որտեղ մոլիբդենը ոչ թե հիմնական, այլ երկրորդական մետաղական բաղադրիչ է [1]:



Նկ. 2. ԶՊՄԿ ՓԲԸ-ում արտադրված մոլիբդենի խտանյութը 2014-2019թթ, տ/տարի

Մոլիբդենի միջանկյալ սպառման համաշխարհային առևտրի հիմնական երկու ապրանքներն են մոլիբդենի օքսիդը (55-57% Mo պարունակություն) և ֆերոմոլիբդենը (65-70% Mo պարունակություն): 2018թ-ին աշխարհում արդյունահանվել է գրեթե 300 հազ. S (650-700 մլն. ֆունտ) մոլիբդեն: ԶՊՄԿ-ն ապահովում է համաշխարհային մոլիբդենի արտադրության 2-3% [1]:

Արտադրանքի արտադության ծավալը արտահայտվում է բնեղեն, պայմանական և արժեքային ցուցանիշներով: Բնեղեն ցուցանիշներն օգտագործվում են միասեռ արտադրանքի առանձին տեսակների և խմբերի վերլուծության ժամանակ: Պայմանական ցուցանիշները վերլուծության մեջ կիրառվում են արտադրանքի արտադրության ծավալի ընդհանրական բնութագրման համար [2]:

Արտադրանքի արտադրության ծավալի ընդհանրական գնահատման համար կիրառվում են նաև արժեքային ցուցանիշներ, որոնք արտահայտվում են համադրելի կամ ընթացիկ գներով: Արտադրանքի արտադրության ծավալը արտադրանքի, աշխատանքների և ծառայությունների ամբողջ արժեքն է: Վերլուծությունը սկսենք ԶՊՄԿ ՓԲԸ-ի արտադրանքի արտադրության և իրացման դինամիկայի աճի տեմպերի հաշվարկով՝ բազիսային և շղթայական եղանակներով (աղ. 1):

Աղյուսակ 1

Ապրանքային արտադրանքի արտադրության ծավալները

Տարի	Ապրանքային արտադրանքի արտադրության ծավալները, հազ. դրամ	Աճի տեմպը, %	
		Բազիսային	Շղթայական
2014	121,994,651	100	100
2015	101,636,455	83.31	83.31
2016	115,591,686	94.75	113.73
2017	186,260,380	152.68	161.14
2018	199,439,507	163.48	107.08
2019	194,458,051	159.40	97.50

Աղյուսակի տվյալներից պարզվում է, որ արտադրության ծավալները 2019թ-ին 59.4%-ով աճել են բազիսային տարվա համեմատ (բազիսային տարին ընդունելով 2014թ.): Իսկ նախորդ (2018թ-ի) տարվա հետ համեմատած արտադրության ծավալները նվազել են մոտավորապես 10%-ով:

Արտադրանքի արտադրության միջին տարեկան աճի տեմպը (Ա) կարելի է հաշվարկել միջին կշռված երկրաչափականով՝

$$\overline{\mathrm{T}}_{\text{ԹԱ}} = \sqrt[n-1]{\mathrm{T}_1 * \mathrm{T}_2 * \mathrm{T}_3 * \mathrm{T}_4 * \mathrm{T}_5 * \mathrm{T}_6} =$$

$$= \sqrt[5]{1.0 * 0.83 * 1.137 * 1.611 * 1.071 * 0.97} = \sqrt[5]{1.579} = 1.095 \text{ կամ } 109.5\%$$

$$\overline{T}_{US} = 109.5 - 100 = 9.5\%:$$

ԶՊՄԿ ՓԲԸ-ի համար արտադրանքի արտադրման միջին տարեկան աճը կազմում է 9.5%: Աղ. 1-ի արդյունքները առավել պատկերավոր ներկայացնենք պոլիգոնի տեսքով (նկ. 3):



Նկ. 3. ԶՊՄԿ ՓԲԸ-ի ապրանքային արտադրանքի արտադրության դինամիկան՝ շղթայական և բազիսային եղանակներով

Ձեռնարկության արտադրանքի իրացման ծավալների դինամիկայի վերլուծությունը ներկայացնենք աղ. 2-ի տեսքով:

Աճի (հավելաճի) միջին տարեկան տեմպը հաշվենք միջին երկրաչափականի միջոցով.

$$\overline{\mathrm{T}}_{\text{ԻԱ}} = \sqrt[5]{1.0 * 0.84 * 1.260 * 1.498 * 1.060 * 0.98} = \sqrt[5]{1.647}$$
$$= 1.105 \text{ կամ } 110.5\%$$

$$\overline{T}_{US} = 110.5 - 100 = 10.5:$$

ԶՊՄԿ ՓԲԸ-ի արտադրանքի իրացման միջին տարեկան աճը կազմում է 10.5%:

Աղյուսակ 2

Արտադրանքի իրացման ծավալները

Տարի	Արտադրանքի իրացման ծավալները, հազ. դրամ	Աճի տեմպը, %	
		Բազիսային	Շղթայական
2014	118,286,470	100	100
2015	99,880,719	84.44	84.44
2016	125,881,686	106.42	126.03
2017	188,553,245	159.40	149.79
2018	199,900,935	169.00	106.02
2019	195,827,666	165.55	97.96

Իսկ ստացված արդյունքները ներկայացնենք պոլիգոնի տեսքով (նկ. 4):



Նկ. 4. ԶՊՄԿ ՓԲԸ-ի արտադրանքի իրացման դինամիկան՝ շղթայական և բազիսային եղանակներով

ԶՊՄԿ ՓԲԸ-ի ապրանքային արտադրանքի արտադրության և իրացման ծավալների դինամիկան 2014-19թթ. ներկայացնենք հիստագրամի տեսքով (նկ. 5):



Նկ. 5. ԶՊՄԿ ՓԲԸ-ի ապրանքային արտադրանքի արտադրության և իրացման ծավալները

Արտադրական ծրագրի կատարման աստիճանը որոշվում է արտադրանքի ծավալի փաստացի և նախատեսված մեծությունների հարաբերակցությամբ ինչպես ամբողջական, այնպես էլ ըստ առանձին արտադրատեսակների (աղ.3): Տարեկան պլանի առաջադրանքների կատարման վերլուծությունն ըստ ապրանքային արտադրանքի արտադրության ծավալի իրականացվում է տարեկան պլանի և տարեկան կամ եռամսյակային հաշվետվությունների տվյալներով: Պլանի կատարումը գնահատում են՝ համեմատելով փաստացի տվյալներն ըստ ապրանքային արտադրանքի ծավալի պլանայինի հետ և որոշելով բացարձակ շեղումը պլանից, տարեկան պլանի կատարման տոկոսը և աճի տեմպերը հաջորդ տարվա համար (աղ. 3 և 4):

Աղյուսակ 3

Արտադրանքի արտադրության պլանի կատարման գնահատականը

Արտադրատեսակ	Արտադրանքի արտադրության ծավալը, մլն. դրամ		Շեղումը, մլն. դրամ	Աճի տեմպը, %
	Պլանային	Փաստացի		
Պղնձի խտանյութ	65,700.1	64,171.2	- 1,528.9	97.67
Մոլիբդենի խտանյութ	50,881.3	130,286.9	79,405.6	256.06
Ընդամենը	116,581.4	194,458.1	77,876.7	166.80

Աղյուսակ 4

Արտադրանքի իրացման պլանի կատարման գնահատականը

Արտադրատեսակ	Արտադրանքի իրացման ծավալը, մլն. դրամ		Շեղումը, մլն. դրամ	Աճի տեմպը, %
	Պլանային	Փաստացի		
Պղնձի խտանյութ	132,812.4	123,909.8	- 8,902.6	93.30
Մոլիբդենի խտանյութ	2,674.1	1,486.9	- 1,187.2	55.60
Ֆերոմոլիբդեն	59,700.3	66,157.6	6,457.3	110.82
Ընդամենը	195,186.8	191,554.3	- 3,632.5	98.14

Աղյուսակների տվյալներից երևում է, որ արտադրանքի թողարկման պլանը գերակատարվել է 66.8%-ով, իսկ իրացմանը թերակատարվել է 1.86%-ով: Այս ցուցանիշի պատճառը պլանայինի հետ համեմատած փաստացի գների նվազումն է, մասնավորապես՝ պղնձի գների նվազումը միջազգային շուկայում: Չնայած նրան, որ պղնձի խտանյութի արտադրությունը թերակատարվել է (2.33%-ով), մոլիբդենի խտանյութի արտադրությունը փաստացի գերազանցել է 1.5 անգամ, ինչն էլ ապահովել է արտադրության պլանի գերակատարումը: Իսկ իրացման պլանի թերակատարումը պայմանավորված է պղնձի խտանյութի 6.7%-ով և մոլիբդենի խտանյութի 44.4%-ով փաստացի ցուցանիշի նվազմամբ, չնայած որ ֆերոմոլիբդենի իրացման ծավալները գերակատարվել են 10.82 %-ով:

Արտադրանքի տեսականու և կառուցվածքի վերլուծություն: Կազմակերպության տնտեսական գործունեության ֆինանսական արդյունքների վրա մեծ ազդեցություն ունեն արտադրանքի արտադրության տեսականին ու կառուցվածքը: Յուրաքանչյուր կազմակերպություն արտադրանքի տեսականու և կառուցվածքի գծով մշակում է համապատասխան քաղաքականություն: Այդ ընթացքում կազմակերպությունը պետք է հաշվի առնի ինչպես սպառողական պահանջարկը, այնպես էլ իր տրամադրության տակ եղած պաշարների առավել արդյունավետ օգտագործման հնարավորությունները [2]:

Արտադրանքի արտադրության ծավալում կարող է փոփոխվել տարբեր արտադրատեսակների բաժինը, այսինքն՝ կատարվեն կառուցվածքային տեղաշարժեր: Արտադրանքի կառուցվածքը չխախտելու համար անհրաժեշտ է դրա փաստացի թողարկման մեջ պահպանել առանձին արտադրատեսակների նախատեսված հարաբերակցությունը: ԶՊՄԿ ՓԲԸ-ում արտադրված պղնձի և մոլիբդենի խտանյութերի արտադրության կառուցվածքը 2019թ-ին ունի հետևյալ տեսքը (նկ. 6):



Նկ. 6. ԶՊՄԿ ՓԲԸ-ի արտադրանքի կառուցվածքը 2019թ. տվյալներով

Դիագրամից երևում է, որ ԶՊՄԿ ՓԲԸ-ի արտադրության կառուցվածքում պղնձի խտանյութը կազմում է 33%, իսկ մոլիբդենի խտանյութը 67%: Արտադրանքի կառուցվածքում տեղի ունեցած փոփոխությունները մեծ ազդեցություն են գործում կազմակերպության տնտեսական գործունեությունը բնութագրող բոլոր ցուցանիշների վրա: Եթե արտադրատեսակի կառուցվածքում մեծանում է ավելի թանկ արտադրատեսակների տեսակարար կշիռը, ապա արժեքային արտահայտությամբ ավելանում է նաև արտադրանքի ծավալը, և ընդհակառակը: Նույն գործընթացն է տեղի ունենում շահույթի դեպքում՝ տարբեր արտադրատեսակների շահութաբերության մակարդակի փոփոխության ազդեցության միջոցով:

ԶՊՄԿ ՓԲԸ-ն իրացնում է նաև ֆերոմոլիբդեն: Դիագրամի տեսքով ներկայացնենք նրա իրացման կառուցվածքը 2019թ.-ին (նկ. 7):



Նկ. 7. ԶՊՄԿ ՓԲԸ-ի արտադրանքի իրացման կառուցվածքը 2019թ. տվյալներով

Ուսումնասիրենք ԶՊՄԿ ՓԲԸ-ի առանձին արտադրատեսակների արտադրության ծավալները բնեղեն արտահայտությամբ: Ստացված արդյունքները ամփոփված են աղյուսակների (աղ. 5 և 6) և գրաֆիկների (նկ.8 և 9) տեսքով:

Աղյուսակ 5

Պղնձի խտանյութի արտադրության ծավալները

Տարի	Պղնձի խտանյութի արտադրության ծավալները, տ	Շեղումը, տ	Աճի տեմպը, %
2014	152,302	-	100
2015	177,165	24,863	116.32
2016	237,578	60,413	134.10
2017	286,674	49,096	120.67
2018	269,919	-16,755	94.16
2019	209,038	-60,881	77.44



Նկ. 8. Պղնձի խտանյութի արտադրության դինամիկան և աճի տեմպը 2014-2019թթ.

$$\overline{T}_{աթ} = \sqrt[5]{1 * 1.163 * 1.341 * 1.207 * 0.942 * 0.774} = \sqrt[5]{1.372} = 1.065 \text{ կամ } 106.5\%$$

$$\overline{T}_{us} = 106.5 - 100 = 6.5\% :$$

Պղնձի խտանյութի արտադրության ծավալի վերլուծությունից ստացվում է, որ տարեկան միջին աճի տեմպը կազմում է 106.5%:

Աղյուսակ 6

Մոլիբդենի խտանյութի արտադրության ծավալները

Տարի	Մոլիբդենի խտանյութի արտադրության ծավալները, տ	Շեղումը, տ	Աճի տեմպը, %
2014	11,382	-	100
2015	10,015	-1,367	87.99
2016	10,802	787	107.86
2017	10,038	-764	92.93
2018	11,391	1,353	113.48
2019	27,007	15,616	237.09



Նկ. 9. Մոլիբդենի խտանյութի արտադրության դինամիկան և աճի տեմպը 2014-2019թթ.

$$\overline{T}_{աթ} = \sqrt[5]{1 * 0.88 * 1.079 * 0.93 * 1.135 * 2.371} = \sqrt[5]{2.376 =}$$
$$= 1.189 \text{ կամ } 118.9\%$$

$$\overline{T}_{us} = 118.9 - 100 = 18.9\% :$$

Աղ. 6-ի տվյալներից եզրակացնում ենք, որ մոլիբդենի խտանյութի արտադրության ծավալի տարեկան միջին աճի տեմպը կազմում է 118.9%:

Արտադրված արտադրանքի որակի վերլուծություն: Լեռնամետալուրգիական ձեռնարկությունում արտադրանքի որակը զգալիորեն կախված է բնական պայմաններից, տեխնոլոգիական գործընթացների առանձնահատկությունից և

կառուցվածքից, օգտակար հանածոյի մշակման աստիճանից և այլն: Լեռնամետալուրգիական ձեռնարկությունը, սովորաբար, վերջնական արտադրանք չի թողարկում: Որպես կանոն, արտադրական ցիկլն ավարտվում է խտանյութի թողարկմամբ, որի համար էլ շատ կարևոր է որակի պրոբլեմի լուծումը: Դա որոշվում է մի շարք գործոններով՝

1. Շահագործման մեջ ընդգրկել օգտակար հանածոների այնպիսի հանքավայրեր, որտեղ օգտակար միներալի պարունակությունը ցածր է և բարդ՝ ըստ իր միներալոգիական կազմի:
2. Ընդերքից օգտակար միներալի կորզման աստիճանի բարձրացում լեռնաերկրաբանական անբարենպաստ պայմաններում՝ բարդ տեխնոլոգիական գործընթացներով և արտադրական առանձնահատուկ պայմաններում:
3. Գործընթացների բազմաստիճանայնությունը և որակի նկատմամբ բարձր պահանջն աշխատանքների կատարման յուրաքանչյուր փուլում [3]:

Լեռնամետալուրգիական ձեռնարկությունում տեխնիկական վերահսկողությունը արտադրանքի որակի կառավարման համալիր համակարգի բաղկացուցիչ մասն է: Այն ընդգրկում է ոչ միայն արտադրանքի որակի ստուգումը, այլև աշխատանքային գործընթացների, գործողությունների և ամբողջությամբ՝ համալիր աշխատանքների որակը:

Լեռնահանքային ձեռնարկությունում տեխնիկական վերահսկողության հիմնական խնդիրներն են՝

1. խոտանի հայտնաբերում և նախազգուշացում,
2. խոտանի առաջացման պատճառների ուսումնասիրում և միջոցառումների մշակում դրանց վերացման համար,
3. թողարկվող խտանյութի որակի վերահսկում,
4. ձեռնարկություն մտնող նյութերի, վառելիքի որակի վերահսկողություն,
5. սարքավորումների և ստուգաչափիչ սարքերի վիճակի վերահսկում,
6. խոտանի պատճառների հաշվառում և վերլուծություն:

Միներալային հումքի հանույթի և խտանյութի, ինչպես նաև սպառողին առաքվող արտադրանքի որակի վերահսկողությունը դրված է ձեռնարկության Հատուկ տեխնիկական վերահսկողության բաժնի վրա: Դա մի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանում է, որը կատարում է հաստատված դրույթներին համապատասխան սահմանված գործառույթներ:

Մոլիբդենի խտանյութի թողարկված յուրաքանչյուր խմբաքանակ ուղեկցվում է համապատասխան որակի վերաբերյալ փաստաթղթով, որի մեջ պետք է նշված լինեն՝

- առաքող ձեռնարկության անվանումը կամ նրա ապրանքային նիշը,

- խտանյութի անվանումը և մակնիշը,
- խմբաքանակի համարը և բեռնատեղերի թիվը,
- խտանյութի որակի վերաբերյալ անդորրագիրը,
- խմբաքանակի զանգվածն ըստ 49% Mo-ի խտանյութի:

Պղնձի 23%-ոց խտանյութն առաքվում է սպառողին խմբաքանակներով՝ ըստ պայմանագրի: Յուրաքանչյուր խմբաքանակ ուղեկցվում է անդորրագրով՝ վկայելով դրա որակը:

Պղնձի խտանյութի նկատմամբ ներկայացվում են որոշակի պահանջներ, որոնցից կարևորներն են՝

- մկնդեղի պարունակությունը՝ ≤0.6%,
- մոլիբդենի պարունակությունը՝ ≤0.12%,
- խոնավության պարունակությունը չչորացված խտանյութում՝ ≤11% [1]:

ԶՊՄԿ ՓԲԸ-ի արտադրանքի ներկայացված որակական ցուցանիշները՝ ըստ առանձին տարիների, ցույց են տալիս, որ թողարկված երկու արտադրատեսակների գծով հիմնական որակական ցուցանիշները բարելավվել են:

Աղյուսակ 7

ԶՊՄԿ ՓԲԸ-ի արտադրանքի որակական ցուցանիշները

	2014	2015	2016	2017	2018	2019
Պղինձ						
Պղնձի պարունակությունը վերամշակված հանքաքարում (%)	0.23	0.267	0.313	0.363	0.378	0.383
Պղնձի կորզումը (%)	78.72	80.45	83.08	90.63	88.2	89.32
Պղնձի պարունակությունը խտանյութում (%)	24.86	24.39	24.12	23.94	24.19	23
Մոլիբդեն						
Մոլիբդենի պարունակությունը վերամշակված հանքաքարում (%)	0.034	0.031	0.031	0.029	0.033	0.031
Մոլիբդենի կորզումը(%)	83.61	82.6	82.1	84.55	88.3	85.1
Մոլիբդենի պարունակությունը խտանյութում (%)	49.02	49.58	49.33	48.86	50.17	49

ԶՊՄԿ ՓԲԸ-ի պայմանագրային պարտավորությունների կատարումը և արտահանման շուկաները: ԶՊՄԿ ՓԲ ընկերությունը ժամանակ առ ժամանակ ճանաչում է պայմանագրային պարտավորություններ մետաղական խտանյութերի բեռնափոխադրման/առաքման ծառայությունների հետ՝ կապված հետաձգված հասույթից, որոնք վաճառում են FCA և CIP միջազգային առևտրի պայմաններով, և որոնց վաճառքից հասույթի մի մասը ստացվել է մինչև ապրանքների բեռնափոխադրման/առաքման ավարտը: Հաշվետու ժամանակահատվածում ճանաչված եկամուտը, որը ներառված էր պայմանագրային պարտավո-

րությունների սկզբնական մնացորդում, 2019թ. կազմել է 465,325 հազար ՀՀ դրամ (2018թ-ին՝ 812,594 հազար ՀՀ դրամ):

Գործարքի գինը, որը բաշխված է մնացած կատարման պարտավորություններին (չկատարված կամ մասամբ չկատարված), 2019թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 1,363,710 հազար ՀՀ դրամ (2018թ-ին՝ 465,325 հազար ՀՀ դրամ): Ակնկալվում է մյուս բոլոր պարտավորությունները կատարել մեկ տարվա ընթացքում [1]:

Աղյուսակ 8

ՀՊՄԿ ՓԲԸ-ի պայմանագրային պարտավորությունները

	2017թ.	2018թ.	2019թ.
Ոչ ընթացիկ	**24,841,042**	**39,157,288**	**9,656,580**
Հոսքային պայմանագրեր	10,479,660	29,421,478	-
Պայմանականորեն գնանշվող վաճառքների գծով ստացված ոչ ընթացիկ կանխավճարներ	14,361,382	9,735,810	9,656,580
Ընթացիկ	**13,785,285**	**22,809,090**	**19,198,586**
Պայմանականորեն գնանշվող վաճառքների գծով ստացված ընթացիկ կանխավճարներ	12,165,858	20,529,702	17,834,876
Հոսքային պայմանագրեր	806,833	1,814,063	-
Պայմանագրային պարտավորություններ	812,594	465,325	1,363,710

2019թ-ի հունվարի 1-ի դրությամբ պայմանագրային պարտավորությունների սկզբնական արժեքը կազմել է 465,325 հազար ՀՀ դրամ: Պայմանագրային պարտավորությունների շարժը մեկ ժամանակաշրջանից մյուսը կախված է բեռնափոխադրման/առաքման ծառայությունների հետ կապված հետաձգված հասույթից, որոնք ժամանակաշրջանի վերջում դեռևս գտնվում են առաքման փուլում, այսինքն՝ պղնձի խտանյութի առաքումը, որը ենթակա է CIP միջազգային առևտրի պայմաններին, ժամանակաշրջանի վերջում դեռևս ընթացքի մեջ է գտնվում:

2016 և 2017թթ.-ի ընթացքում ընկերությունը կնքել է պղնձի մատակարարման երկու հոսքային պայմանագրեր, որոնց շրջանակներում ստանում է համապատասխանաբար 25 մլն և 50 մլն ԱՄՆ դոլլար գումարների չափով կանխավճարներ և պարտավորվում է վաճառել 150,000 և 480,000 խոնավ մետրիկ տոննա խտանյութ 2017-2031թթ. և 2018-2041թթ.-ի ընթացքում՝ զեղչված գներով: 2019թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ոչ ընթացիկ մնացորդը կազմում է՝ զրո (2018թ.՝ 29,421,478 հազար ՀՀ դրամ):

2019թ-ին ընկերությունը դադարեցրեց հոսքային պայմանագրերը և կնքեց խտանյութի առաքման մեկ ուրիշ պայմանագիր այլ հաճախորդի հետ: Համաձայն

դադարեցված պայմանագրի՝ ընկերությունը պարտավոր է վճարել դադարեցված պայմանագրերի դիմաց համապատասխանաբար 30 և 74 մլն ԱՄՆ դոլլար [1]:

Վերլուծության ենք ենթարկել նաև ՀՊՄԿ ՓԲԸ-ի արտադրանքի իրացումը ներքին շուկայում և արտահանման ծավալները՝ ըստ երկրների (աղ.9 և 10):

Աղյուսակ 9

ՀՊՄԿ ՓԲԸ-ի արտադրանքի իրացման ծավալները՝ արժեքային արտահայտությամբ

Իրացում, հազ. դրամ	**2017**	**2018**
Ներքին շուկայում		
Պղնձի խտանյութ	3,279,435	1,446,666
Ֆերոմոլիբդեն	40,251,724	0
Արտահանում, հազ. դրամ		
Չինաստան	35,261,504	22,923,073
Ռումինիա	3,063,887	21,800,348
Բուլղարիա	105,440,950	102,888,999
Նիդեռլանդներ	0	59,700,316

Աղյուսակ 10

ՀՊՄԿ ՓԲԸ-ի արտադրանքի իրացման ծավալները՝ բնեղեն արտահայտությամբ

Իրացում, տ	**2017**	**2018**
Ներքին շուկայում		
Պղնձի խտանյութ	6177	2426
Ֆերոմոլիբդեն	6520	0
Արտահանում, տ		
Չինաստան	68,994	41,055
Ռումինիա	5,995	39,044
Բուլղարիա	206,310	184,271
Նիդեռլանդներ (ֆերոմոլիբդեն)	0	6,980

Աղյուսակների տվյալներից պարզ է դառնում, որ պղնձի խտանյութի իրացումը ներքին շուկայում նվազել է 2018թ-ին՝ 2017թ-ի համեմատ 3751 տոննայով: Իսկ ֆերոմոլիբդենի իրացում ներքին շուկայում 2018թ-ին չի եղել (2017թ-ին՝ 6520տ): Արտահանման կառուցվածքում պղնձի իրացման մեծ տեսակարար կշիռ ունի Բուլղարիան, չնայած որ 2018թ-ին արտահանման ծավալները նվազել են 2017թ-ի համեմատ: Իսկ դեպի Ռումինիա արտահանման ծավալները աճել են մոտավորապես 8 անգամ: 2018թ-ին 6980տ ֆերոմոլիբդեն արտահանվել է Նիդեռլանդներ, նախորդ տարի այն ամբողջությամբ իրացվել էր ներքին շուկայում:



Նկ. 10. ՀՊՄԿ ՓԲԸ-ի արտադրանքի արտահանման կառուցվածքը



Նկ. 11. ՀՊՄԿ ՓԲԸ-ի արտադրանքի արտահանման դինամիկան

Այսպիսով, Հայաստանի ամենախոշոր հանքավայրը շահագործող ընկերության՝ ՀՊՄԿ ՓԲԸ-ի արտադրանքի արտադրության և իրացման վերլուծությունից եզրակացնում ենք, որ ընկերության հաջողության ակունքը շուկայում պահանջարկ ունեցող արտադրատեսակների գրագետ պլանավորված և կազմակերպված արտադրությունն է և համապատասխան իրացման շուկաներում իրացումը, որի արդյունքում ստացված հասույթն ապահովում է ոչ միայն ընթացիկ բարձր եկամուտներ, այլև հեռանկարային երկարաժամկետ ներդրումներ և զարգացում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. http://www.zcmc.am/arm/inestteorsarm/azdagir/
2. **Սարգսյան Ա., Առաքելյան Կ.** Տնտեսական գործունեության վերլուծություն.- Երևան: Տնտեսագետ, 2005:
3. **Савицкая Г.В.** Экономический анализ // Новое знание.- 13-е издание.- 2007.

С.А. МКРТЧЯН, Л.А. АЛАВЕРДЯН, С.М. БАХШЯН, К.А. ГУЛЯН

АНАЛИЗ ПРОИЗВОДСТВА И РЕАЛИЗАЦИИ ПРОДУКЦИИ ГОРНОМЕТАЛЛУРГИЧЕСКОЙ КОМПАНИИ

Продукция горнометаллургической промышленности, производимая в Армении, в основном реализуется за границей по ценам Лондонской фондовой биржи фактически в условиях конкуренции на международном рынке. В связи с этим грамотное решение вопросов анализа производства и реализации продукции может обеспечить гарантированный доход для компаний отрасли. В статье представлен проведенный в последние годы анализ производства и реализации продукции ЗАО «Зангезурский медномолибденовый комбинат».

Ключевые слова: производство продукции, реализация, экспортные рынки, исполнение договорных обязательств.

S.A. MKRTCHYAN, L.A. ALAVERDYAN, S.M. BAKHSHAN, K.A. GULYAN

ANALYSIS OF PRODUCTION AND THE PRODUCT REALIZATION OF A MINING AND METALLURGICAL COMPANY

The product of the mining and metallurgical industry produced in Armenia is basically realized abroad at the prices of the London Stock Exchange, in fact under the conditions of competition in the international market. In connection with this, the accurate solution in the process of analysis of production and realization of products can ensure a guaranteed income for the company to grow. In the article, an analysis of production and realization of products of CSJC "Zangezur copper-molybdenum plant" in recent years is presented.

Keywords: manufacturing of products, realization, export markets, fulfilling contractual obligations.